



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Առաջնորդին Հայոց Եւրպիոյ ԳԼԲ. Տ. Գէորգ եպիսկոպոսի Իւթիւճեան, որով պատուիրի վերածել զՍուբէն որդին Տ. Եղնիկ ա. քահ. Ի Երզնկեան Տփիսեաց յաւաիճան աւագ սարկաւադութեան. թ. 1113:

— Յանուն աւագ անդամոյ Կոնստանդինային Տփիսեաց Բարեշնորհ Տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան, որով պատուիրի թողուլ զպաշտօնս իւր և վերադառնալ ի Մայր Աթոռս. թ. 1117:

— Յանուն վանահօր ս. Սարգիս ուխտատեղւոյն Տըփիսեաց Բարեշն. Տ. Մամբէ վարդ. Ի որով պատուիրի զնիւ թիթեղս ի պէտս տանեաց վանուցն Հաղարծնոյ. թ. 1118:

— Յանուն վիճակային Կոնստ. Վրաստանի և Իմերեթի, որով պատուիրի ազատ համարել ի պաշտամանէ վանահայրութեան Թելիթի զՏ. Թադէոս վարդ. և Առիւծեան և ի տեղի նորա կարգել զՏ. Դիոնէսիոս վարդ. և իսկ զՏ. Յովհաննէս վարդ. և ազատ համարելով ի պաշտամանէ վոխանորդութեան Գօրւոյ՝ կարգել ի վանահայր Շահնարաթի. թ. 1120:

— Յանուն Առաջնորդին Կարնոյ Բար. Տ. Զաւէն Տ. վարդ. Ի որով ըստ խնդրոյ և համաձայն կործեաց նորին լուծեալ համարեցան պսակք՝ Կարնեցի Թորոսի Խաչատրեան, Մարտիրոսի Զթշեան և Սեղրակայ Թորոսեան, ի պատճառս

պոռնկութեան կանանց նոցա թոյլ տալով արանցն մտանել ի նոր ամուսնութիւն. թ. 1185:

— Յանուէն Փոխանորդին Կարուց Բար. Տ. Կիւրեղ վարդապետի որով մերժեցաւ խնդիր Բաղիշեցի ասորի Յարութիւնի Պեարոսեան՝ պսակել ի Հայոց եկեղեցւոյ ընդ հայուհւոյ մինչ լքեալ է նորա զառաջին հայ կինն իւր, և պսակն լուծեալ է ի հոգեւոր իշխանութենէ Ասորւոց. թ. 1194:

— Յանուէն Հոգաբարձութեան թեմակ. Հոգ. Գպրանոցին Արցախայ, որով հաստատեցաւ տուչութիւն կենսաթոշակի քարտուղարի Հոգաբարձութեան Յակոբայ Ուսթէլեանցիեանս՝ ի տարին չորս հարիւր ռուբլի. թ. 1197:

— Յանուէն վիճ. Կոնսիատ. Երեւանայ, որով լուծեալ համարեցաւ պսակն զաղթական Անդրէասայ Շմաւոնեան Մեծոփեցւոյ ընդ անառակ կնոջ նորա Գողէի Ներսիսեան, զրկելով զվերջինս յիրաւանց վերստին ամուսնութեան. թ. 1199:

— Յանուէն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի տալ Շնորհ. Իւսահակ սարկաւազի Տ. Ղազարեան 600 ռ. թոշակ ի անկոսեաց Փրիզոնեան կտակին՝ ի գնալ նորա ի Ռուսաստան և շարունակել զուսումն ի Կոյս. համալսարանի Մոսկուայի. թ. 1204:

— Յանուէն վիճ. Կոնսիատ. Վրաստ. և Իմերեթի, որով կարգի ի նախանգամ Ատենին Բար. Տ. Արսէն վարդապետն Ղլաճեան. թ. 1217:

— Յանուէն Առաջն. Հայոց Ամերիկայի Գեր. Տ. Յովսէփ Եպս. Սարաճեան, որով հաստատեցաւ սահմանադրութիւն Հայոց Ամերիկայի. թ. 1226:

— Յանուէն նոյն Առաջնորդի, որով թոյլատրի նմա ձեռնադրել քահանայս վասն Լեհացի կաթողիկ ժողովրդեան Ամերիկայի, որք ելին ընդ իշխանութենէ Պապին Հռոմայ և կամին լինել անդամք ընդհանրական եկեղեցւոյ. թ. 1227:

— Յանուէն Առաջնորդին Հայոց Առաքատականի Տ. Եղիշէ Տ. վարդ. ի, որով լուծեալ եղև պսակն Սարմատեցի Սեփանայ Մահաթի—Գրիգորեան ընդ ուրացեալ կնոջ նորա Եղիսաբեթի, տալով իրաւունս ան մահանել ի նոր ամուսնութիւն. թ. 1128:

— Յանոււն վիճ. Կոնսիստ. Երեւանայ, որով լուծեալ եղև պատկն Կարնեցի Յարութիւնի Աւետիսեան ընդ կնոջն Հայկանուշի, որոյ ի քսան ամաց հետէ թողեալ է զայրն իւր տալով աւաջնոյն իրաւունս վերստին ամուսնութեան. թ. 1238:

— Յանոււն Փոխ. Թեմակալին Երեւանայ Գեր. Տ. Սուքիաս Արքեպս. ի յաղագս կարգելոյ զՆերսէս քահանայն Տ. Նիկողայոսեան ի կրօնուսոյց Առևտրական դպրանոցին Ազէքսանդրապօլու. թ. 1240:

— Յանոււն վիճ. Կոնսիստ. Վրաստ. և Իմերեթի, որով թոյլատրի փոխադրել զդի հանդուցեալ Գէորգայ Թամաշեան առ շիրիմս տոհմին իւրեանց. թ. 1273:

— Յանոււն Աղքատախնամ ընկերութեան Դավրիթոյ, որով հաստատեցաւ կանոնադրութիւն նորին. թ. 1296:

— Յանոււն Տ. Մամբրէ վարդ. ի, որով պատուիրի տալ 5 ա. առ ամիսն այրւոյն հանգուցեալ Յակովբայ ճաղարբէգեան. թ. 1298:

— Յանոււն վիճ. Կոնսիստ. Վրաստ. և Իմերեթի, յաղագս ենթարկելոյ միամսեայ ապուշխարանաց զՏ. Յակովբ քահանայն Խուցեան և զՏ. Պետրոս քահանայն Վարչամեան ի Գորի քաղաքի. թ. 1315:

— Յանոււն վանահօր Սանահնի վանուց Գեր. Տ. Գաբրիէլին եպս. ի, յաղագս ձեռնադրելոյ ի քահանայ զՄարգար Տ. Խաչատրեանց և զՄկրտիչ Տ. Ստեփանեանց. թ. 1316:

— Յանոււն վանահօր Հաղարծնի վանուց, որով թոյլատրի վաճառել յանտաւէն զչորացեալ փայտս. թ. 1321:

— Յանոււն գործակալին չորից գիւղորեից կողմանցն Դիլիջանի Տ. Աբրահամ վարդ. ի, որով հրամայի ստանալ 250 ա. յեկեղեցւոյն Պօղոս—Քիլիսա գեղջ և խորհրդածութեամբ ընդ երեցփոխանի տեղւոյն լրացուցանել զթերին զգեստուց եկեղեցւոյ գեղջն. թ. 1322:

— Յանոււն Փոխանորդին Գանձակայ Գեր. Տ. Անանիա եպս. ի, որով պատուիրի կարգել զօր ի քահ. ից ի վանահայր Զարեքայ վանուց, մինչ ցառանձին տնօրէնութիւն. թ. 1325:

— Յանոււն Բար. Տ. Գրիգորիս վարդ. ի Տ. Յակովբեան,

որով կարգի ի վանահայր Երնջակայ Ս. Կարապետի վանուց. թ. 1330.

— Յանուէն վիճ. Կոնսիստ. Երեւանայ, որով պատուիրի յանձնել զվանս Ս. Կարապետի վանուց յիշեալ Տ. Գրիգորիս վարդ. ի. թ. 1331:

— Յանուէն Բար. Տ. Համադասպ և Մատթէոս վարդապետաց, յաղագս գնալոյ ի Դարալագեալ և Ժողովելոյ զարդիւնս ուխտին Ս. Խաչ վանուց. թ. 1338:

— Յանուէն Հոգաբարձութեան թեմ. Հոգեւոր Դպրանոցին Երեւանայ, որով հաստատի ի տեսուչ դպրանոցին Բար. Տ. Գարեգին վարդ. ի Յովսէփեան. թ. 1353:

— Յանուէն Ասաջն. Հայոց Եւրոպիոյ Գեր. Տ. Գէորգեոս. ի Իւթիւճեան, որով պատուիրի տեղեկանալ զկտակէ վիկենայարնակ Անարօնաքիի Խօանէսքւոյ. թ. 1356:

— Յանուէն հայ Ժողովրդեան Եւրոպիոյ, Ամերիկայի և Եգիպտոսի՝ յաղագս նպաստելոյ դրամովք որբանոցին Վանայի, համաձայն խնդրանաց Թաղական Խորհրդոյ նոյն քաղաքի. թ. 1358:

— Յանուէն Գեր. Տ. Ղևոնդ եպս. ի, որով պատուիրի վերածել յաստիճան սարկաւազութեան զՄկրտիչ Մուրադեան և զՂևոն ճէտիտեան, և յաստիճան արեղայութեան զԳէորգ սարկաւազ Թովմա—Աղայեան և զՅարութիւն սարկաւազ Մաքսուդեան. թ. 1365:

— Յանուէն Խորէն քահ. ի Արգարեան, որով կարգեցաւ ի գանձապահ գանձանակադրամոց Մ. Աթոռոյ ի ս. Աստուածածին եկեղեցւոյ Աղէքսանդրապօլ քաղաքի. թ. 1375:

— Յանուէն Սինօղի ս. Էջմիածնի, որով պատուիրի պայմանաւորել ընդ հանքադէտ պ. Հմոյեակայ Վահանեան, յաղագս շահագործելոյ զհանքս վանուցն Գանձասարայ. թ. 1383:

— Յանուէն Սինօղի, որով պատուիրի կարգել զՏ. Ղուկաս վարդ. ի վանահայր ս. Գէորգայ Մողնոյ և զՏ. Գէորգ վարդ. Ռշտունի ի վանահայր Խորվիրապայ վանուց. թ. 1390:

— Յանուէն Վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ, որով պատուիրի տալ, սկսեալ ի մէկէն սեպտեմբերի առ ամիսն

20-ական ռուբլի ռոճիկ աշխատողաց ի Մատենադարանի Մայր Աթոռոյ, վասն Համեմատութեան Անտուածաշունչ Ս. Գրոց՝ Միսակայ Խոստիկեան, Նիկողայոսի Քիւրզեան և Աւետիսի Տ. Յարութիւնեան. թ. 1426:

— Յանուէն Սինօդի ս. Եջմիածնի, յաղագս ենթարկելոյ զՅովհաննէս քահանայն. Տ. Աւագեանց Նուխեցի միամեայ եկեղ. ապաշխարանաց ի վանսն Գանձասարայ. թ. 1428:

— Յանուէն Թեմակալին Արցախայ Գեր. Տ. Գրիգոր եպս.-ի, որով տան նմա իրաւունք կարգելոյ զԽորէն արեղայն Լազարեան ի վանահայր Ամարասայ, և զարդի վանահայրն զՏ. Վահան վարդ.-ն փոխադրել ի վանս Խոթայ նովին պաշտամամբ, տալով նմա սնունդ և ռոճիկ. թ. 1440:

— Յանուէն Փոխանորդին Գանձակայ Գեր. Տ. Անանիա եպս.-ի, որով պատուիրի օծանել զվէմ սեղանոյ և տալ Հայ Ժողովրդեան Ելենենդօրֆ աւանի. թ. 1486:

— Յանուէն Սինօդի ս. Եջմիածնի, որով պատուիրի լուծեալ Համարել զպսակ Տփիսիսեցի Նիկողայոսի Լալայեան ընդ կնոջն և տալ երկօցունցն իրաւունս վերստին ամուսնութեան. թ. 1497:

— Յանուէն վիճ. Կոնսիստ. Վլաստ. և Իմէրեթի, որով պատուիրի յայտնել մայրապետին Կուսանաց Անապատին տեղւոյն, եթէ պարտ է տալ ամ ըստ ամէ զհաշիւ ել և մօից Կուսանոցին. թ. 1510:

— Յանուէն նոյն Կոնսիստ.-ի, որով պատուիրեցաւ տալ կաղմել զմակարդակ կալուածոց վանուցն Չարեքայ և ապա նշանակել մասնագէտ անձինս, յաղագս հետազօտելոյ զկալուածն. թ. 1511:

— Յանուէն Փոխանորդին Հօտին Սիւնեաց Տ. Ներսէս վարդ.-ի, որով պատուիրի գրել ի ծախս՝ ի հաշիւ կալուածոց վանուցն Տաթևու, զ100 ռուբլին, զընկալեալն ի նմանէ Տ. Մատթէոս վարդ.-ի յամին 1901, ի ծախս ճանապարհին, զոր ընթացաւ յառնել քննութիւնս. թ. 1513:

Հայրապետական պարգևք.

Շնորհեցաւ կոնդակ վարդապետական լանջախաչի յանուն
Տ. Գրիգոր ա. քահ. ի Խորասանձեան Սղեսոսայի, վասն արիա-
ջան վաստակոյ նորա. թ. 1424:

Շնորհեցաւ կոնդակ քահանայական լանջախաչի յանուն
Սարգիս քահ. ի Ղարիպեան Վառնա քաղաքի. թ. 1359:

— Կոնդակ յանուն Բար. Տ. Գէորգ վարդ. ի Սշտունեոյ՝
վանահօր ս. Խորվիրապայ, որով շնորհեցաւ նմա կերպասեայ
փիլրն:

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհոնակութիւնք.

Կոնդակ օրհնութեան յանուն Հոգաբարձութեան Հայ
գաղթականութեան Փարիզի, յաղաքս ձեռնարկութեան շի-
նութեանն նոր եկեղեցւոյ Հայոց ի մայրաքաղաքին. թ. 1122:

— Գոհունակութեան եւ օրհնութեան յանուն ամուս-
նոց Խաչատրոյ եւ Նարզիլի Ստեփանեան, վասն նուիրելոյ
նոցա զ100 ա. ի նպաստ եկեղեցւոյն Քեօլաղւան գեղջ Ն.
Բայազիտի. թ. 1141:

— Օրհնութեան եւ գոհունակութեան յանուն պ. Լիւդ-
վիկի Սերգէյեան Բագուեցւոյ, յաղաքս նպաստից նորա ի
նորոգութիւն վանուցն Տաթևու. թ. 1187:

— Օրհնութեան եւ գոհունակութեան յանուն բարե-
պաշտուհի քերց Տիկ. Վարդուհւոյ Խաչանեան եւ Տիկ. Հե-
րիքնավի Փիրղատեան Նուխեցւոյ, վասն մի հարիւր բուբլի
նուիրարեութեան յանուն Հոգեւոր ձեմարանի Մայր Աթո-
սոյ. թ. 1190:

— Յանուն երկուց եղբարց Սողոմոնի եւ Աղէքսանդրի
Աբովեանց Ղաբաքիլիսեցւոյ, որով յայտնի ցաւակցութիւն
վասն մահուան հօր նոցա Խաչատրոյ. թ. 1255:

— Օրհնութեան եւ գոհունակութեան յանուն որդւոց
հանգ. Յովսեփայ Թումայեանց, յաղաքս 3000 ա. նուիրարե-
ութեան նոցա ի գնել զմի աղաղատիպ մատուլ ի պէտս վա-

նուցն Նոր Զուգայու, որ ի Պարսկաստան. թ. 1258:

— Օրհնութեան յանուն Հայ Ժողովրդեան զԻւղօրէիցն զիճ. Ախալցխոյ և Ախալքալակայ, որով յորդոր կարդացեալ լինի բառնալ զսովորութիւն աւելորդ ծախուց հարսանեաց:

— Օրհնութեան յանուն Տիկին Սոփիայի ԶիԺախեանց և իշխանուհի Մարիամու Բէգժաբէգեանց, յաղագս շինելոյ նոցա ծախիւքն իւրեանց զճանապարհ վանուցն Շահնաբաթի մերձ ի Տփլիս. թ. 1313:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Վիննայարնակ Անտրօնօքիի Խօանէսքւոյ, վասն կտակելոյ զստացուածս իւր յիրաւասութիւն Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց. թ. 1357:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Գրիգորի Խրիստափօրեան, յաղագս 40,000 ռ. կտակի ազգականի նորին, հանգուց. Գրիգորի Անտօնեան Սերբրեննիկեան՝ յանուն Հոգ. Ճեմարանի Մ. Աթուոյ, Ս. Երուսաղեմի, եկեղեցւոյն Օգեստ քաղաքի և երկուց ուսումնարանաց Վան քաղաքի. թ. 1426:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Յարութիւնի Յովսէփեան Ղալարեանց Տփլիսեցւոյ, յաղագս նուիրելոյ նորա զմեծ թաւշեայ վարագուր մի սեղանոյ Վանաց Մայր եկեղեցւոյն Տփլսեաց. թ. 1433:

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն Պրօֆէսոր Վարապետի Թումայեան, յաղագս խնամարկութեան Հայկական օրբանոցին որ ի Նոնդոն. թ. 1439:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն Տիկ. Մարիամու Ասլանեան Խաչիկեանց Արմաւիրցւոյ, վասն 100 ռուբլի նուիրարկութեան՝ ի արամադրութիւն Նորին Արքութեան Վեհ. Հայրապետի. թ. 1514:

